

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարերի պատասխաններ

X-դասարան

1. Ոսկեդարից հետո հայ գրականությունը զարգացման մի յուրահատուկ ճանապարհ է անցնում 6-11-րդ դարերում, երբ մեր ազատատենչ ժողովուրդը երկնեց իր «բանաստեղծական պատմությունը», մեծ աղոթա-ասացք երկխոսություն սկսեց Աստծո հետ և մարդուն բնակեցրեց Նրա մեջ: Իսկ XII-XIV դարերը դարձան մեր ժողովրդի բողոքի, իրավունքի, ազատության պաշտպանության դարեր: Հենց այս երևույթն էլ կոչվում է գրականության աշխարհականացում: Այս դարերում էր, որ սկիզբ առավ միջին հայերենը, այս դարերում դասական գրաբարը ավելի մոտեցավ խոսակցական լեզվին, և մեր տաղերգուները երգեցին ժողովրդին հասկանալի լեզվով: Այդ դարերի մեծագույն երախտավորներից են Գրիգոր Տղան, Հովհաննես և Կոնստանտին Երզնկացիները, Ֆրիկը, Խաչատուր Կեչառեցին և այլք: Ֆրիկն իր ստեղծագործության ժողովրդականացնող քնարերգությամբ առաջին խոշոր դեմքերից մեկն է: Մի բանաստեղծ, որ, ինչպես իր կյանքի, այնպես էլ իրականության գեղարվեստական պատկերը կերտելով՝ գրել է իր ժամանակի հավաստի պատմությունը: Ֆրիկը միջնադարի մեծ դժգոհն է, արդարության մունետիկը, հավատի համոզված քարոզիչը: Այս յուրօրինակ բանաստեղծի կյանքից մեզ գրեթե ոչինչ հայտնի չէ, ինչ էլ որ հասել է մեզ, հասել է շնորհիվ հայ գրականության մեծ երախտավոր Մանուկ Աբեղյանի տքնաջան աշխատանքի, որ բծախնդրությամբ հավաքել է նրա իսկ քերթվածներից: Ղևոնդ Ալիշանը տալիս է Ֆրիկի հոր՝ Թագվոշի և հորեղբոր՝ Դոդոնայի անունները: Ալիշանը գրում է. «Բարակ զգացմանց եւ ուղիղ մտաց տէր, նաեւ ճարտար տաղաչափ պէս պէս վանկերով՝ նորանուն քերթող մը կայ Ֆրիկ, որդի Թագվոշի, եղբորորդի Դոդոնայի»: Ըստ Տիրայր արքեպիսկոպոսի՝ Ֆրիկի «Դիւան» ին կցած ուսումնասիրության, Թագվոշը Ֆրիկի մոր անունն է՝ Թագուհի, Թագուշ, Թագվոշ: Ֆրիկը երիտասարդության տարիներին եղել է աշխարհական, եղել է գրագետ անձնավորություն՝ տեղյակ «Աստվածաշունչ»-ին, հայ մատենագրությանը, պատմությանը, ժողովրդական ավանդույթներին: Եղել է ունևոր մարդ, այնուհետև սնանկացել է, պարտքի դիմաց գրավ է դրել որդուն և հետո չի կարողացել փրկագնել: Այս ամենը տեղ են գտել նրա տաղերում՝ առարկայացնելով իր իսկ տաղերգության ինքնակենսագրական մոտիվը: «Ֆրիկ» անունը միջնադարում, ըստ ստուգաբանության, նշանակում է կրակի վրա խանձված դեռահաս ցորեն, հավանական է համարվում նաև Ֆրեդերիկ, Ֆրիդ, Ֆրիդոն անուններից մեկի փաղաքշական ձևը, երբ ավելացվում էին -իկ,-ակ,- ուկ նվագական վերջավորություններ: Ֆրիկի ստեղծագործության մեջ գերիշխող են մի քանի մոտիվներ՝ հավատի և իրատական երգեր, անձնական ողբերգություն, սոցիալական դրամա, պատմության և ավանդագրույցների անդրադարձեր: Հավատի երգերում

Ֆրիկը հոգու փրկության հույս ունի և գիտի՝ որքան դառնադի ողբա, այնքան հույսը կավելանա: Այստեղ նա մոտենում է Մեծն Նարեկացուն: Նա նույնպես ժխտում է մարմինը. «Մուտ է մարմինն և սընտոի, ներքեւ հողին կերթայ փրտի»: Իր խրատական բանաստեղծություններում նա ասում է . «Ով որ կարայ յայս խըրատէս, թո՛ղ յէտ բանայ զականջ հոգոյ...»:

Հայ միջնադարյան քնարերգության մեջ Ֆրիկն առաջիններից էր, որ անձնական կյանքը կենսագրական մանրամասներով դարձրեց ստեղծագործության նյութ: Նա ըստ էության դարձավ անձնական քնարերգության սկզբնավորողը. Այդ բացահայտում է նրա բազմաթիվ տողերի մեջ, նաև՝ «Վասն հոգոյ» տողում.

Գագան ւ անասուն ու հաւք, գեմ ունին իրենց տուն ու բուն ,

Ո՛չ տուն, ու ո՛չ տեղ ունին, կու խոցիմ ի յանհաւատնուն

Դըրի զիմ որդին գըրավ, ուստի ճուղապ գընալուն

Միթե թագաւորն երկնից՝ նա բերէ զիմ որդին ի տուն:

Ֆրիկը նաև սոցիալական բողոքի հիմնադիրն է մեր գրականության մեջ: Այս բողոքը հրաշալի է արտահայտված «Բան պիտանի», «Ընդդեմ ֆալաքի» և «Գանգատ»՝ «Բան ի Ֆրիկ գրքոյն» բանաստեղծություններում:

Ազգային ողբերգության գանգատն ու բողոքը Ֆրիկը միահյուսել է սոցիալական բողոքին: Նա սկզբում գանգատվում է ճակատագրից, բայց հետո, ճակատագրից ստանալով՝ թե իր արարքները թելադրված են Աստծո կողմից՝ «Արարչէ՛ն լինին», նա համարձակորեն դիմում է Աստծուն՝ կասկածի տակ դնելով նրա արդար և իրավացի լինելը: Նրա «Գանգատը» հիրավի մի սքանչելի կոթող է վասն անարդարության , երբ Աստված «Արդար և իրավ» կոչված, անարդար է բաշխում կյանքը, ինչքը, իրավունքը: Հակադրությունների շարքը չափազանց երկար է , ներկայացվում են անհավասարության վրա կառուցված աշխարհի բոլոր թերությունները՝ որոնց համար միջնադարյան բանաստեղծը խիզախորեն մեղադրում է Աստծուն.

Մէկն ի պապանց պարոնորդի,

Մէկն ի հարանց մուրող լինի,

Մէկին հազար ձի ու ջորի,

Մէկին ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի,

Մէկին հազար դեկան ոսկի,

Մէկին ո՛չ փող մի պըղընձի,

Մէկին հազար հատ մարգարտի,

Մէկին ոչ ուլնիկ մի ապիկի..

Աշխարհի անարդարությունները համարձակորեն վեր հանող մեծ բանաստեղծը հիմք դրեց անձնական և հասարակական ցավերի փոխկապակցվածությանը, համարձակորեն նկարագրեց այն բոլոր խոտանելի կողմերը, որ կային մարդու մեջ առհասարակ: Ընդդիմացավ բռնությանն ու անհավասարությանը, բողոքեց անարդարության ու անհավասարության դեմ՝ դառնալով միջնադարյան գրականության մեծ բողոքողն ու ազնիվ ըմբոստը:

2. Միջնադարյան տաղերգության հարուստ բաժիններից է հայրենը, որը՝ որպես բանաստեղծության տեսակ, ձևավորվել է 10-12-րդ դարերից սկսած՝ միաժամանակ թե՛ որպես անհատական ստեղծագործություն, թե՛ որպես ժողովրդական բանահյուսություն: Հայրենների օրինակ մենք տեսնում ենք դեռևս Գրիգոր Նարեկացու մոտ:

Բանաստեղծական այս տեսակը հայտնի է դառնում «հայերեն» կամ «հայրեն» բնորոշումով: Ֆրիկը նույնպես ունի այնպիսի վերնագրեր, որտեղ հանդիպում ենք այս եզրույթին: «Վասն սիրոյ հայերէն է», «Հայերէն բաներս հոգեշահ»:

Հայրեններ գրել են Ներսես Շնորհալին, Հովհաննես Երզնկացին, Վարդան Բերդաձորեցին, Խաչատուր Կեչառեցին և ուրիշներ: «Հայերէն» եզրույթը վկայվել է ոչ միայն «Հայերէն», այլև «հարեն», «հայրենի», «հայրենիք», «հայրենիկ» ձևերով:

Արշակ Չոպանյանը գրում է. «Քուչակի հայերեն ասա»-ն ըսել կուզե թե այդ երգերը խտացված էին հայկական ոճով և հայկական երաժշտությամբ»:

Մանուկ Աբեղյանը ևս հնարավոր է համարում այս բացատրությունը: Ըստ Աբեղյանի՝ հայրենը հայերենի սղված ձևն է;

«Այդ երգերն ունեցել են մի առանձնահատուկ հայկական բան, այդպես կոչվելու համար «Արդ, եթե մեր հայրեններն սկզբնապես ունեցած էլ լինեն մի առանձին հայկական եղանակ, նրանք անպայման միաժամանակ ունեցել են և մի առանձին հայկական բանաստեղծական չափ, որի համար և այդպես են կոչվել» (Մանուկ Աբեղյան):

Կիրառվել է նաև կաֆա հասկացությունը, որը համարժեք է հայրենին:

Միջնադարյան հայրենների թեմատիկան հարուստ չէ. Մեզ հասած 500 հայրենները բաժանվում են 3 խմբի՝ սիրո, պանդխտության և խոհափիլիսոփայական: Հայրենները ստեղծվել են արևմտահայ քաղաքա-

յին միջավայրում (Ակն, Վան, Խարբերդ): Հայրենների մի զգալի մասը վերագրվում է XVI դարի բանաստեղծ Նահապետ Քուչակին, որը ծնվել և ապրել է Վանի Խառակունիս գյուղում, ապրել է շուրջ 100 տարի և վայելել մեծ սեր ու հարգանք, նրա երգերը բուժել են հիվանդներին, կարոտյալներին:

Միրային հայրենների հիմքը սերն է, որը կեցության հիմք է, կյանք է, հավատ է, ապրելու նպատակ է: Նահապետ Քուչակի սիրո հայրենների համար բնաբան կարող է ծառայել՝

Երբ սերն ի յաշխարհս եկավ, եկավ իմ սիրտս բնակեցավ.

Հապա յիմ սրտես ի դուրս՝ յերկրե յերկիր թափեցավ.

Եկավ ի գլուխս ելավ. Ի ըղեղս ելավ թառեցավ,

Աչիցս արտասուք ուզեց, հայ արյուն ի վար վաթեցավ:

Ուրեմն՝ սերը նախ՝ սրտի մեջ է ապրում, ապա՝ սրտից տարածվում աշխարհով մեկ, այնուհետև թափանցում է մարդու գիտակցության մեջ, դառնում հուզմունք, որ աչքերից

արտասուք է թափում, հետո այնքան է տառապեցնում , որ արտասուքը արյուն է դառնում, հետո մարդն ամբողջովին ու անգոր` տրվում է սիրուն:

Մերը համընդհանուր բերկրանք է ու տառապանք և ըստ սիրող հեղինակի`
«Չկա ոչ տղա, ոչ ծեր, որ սիրո կաժան չէ կոխեր»:

Միրո տերը և գլխավոր հերոսը Ես-ն է , որոշակի անձնավորություն, որ խոսում է իր անունից.. գլխավոր հերոսը Ես-ն է, իսկ հերոսուհին Նա` յարը, յարուկը, յարիկը, աղվորը, կաքավուկը, կյուզելը (գոգալը), գալումը, որին դիմում է « հոգուս հոգի», « ծաղիկ դու պայծառ »և այլն:

Միրո հայրեններում փառաբանվում է անշահախնդիր սիրո գաղափարը.

«Մերն խնձորով պիտի», «Հոգիս ալ հոգիդ ուզե, չէ չասեմ , հանեմ տամ ի քեզ»: Միրո հայրեններում կան սիրո հոգեբանական վիճակներ` կարոտի, վայելքի, սիրո կորստի, խանդի և այլն:

Բայց բոլոր հայրեններում և հերոսը` Ես-ը, և հերոսուհին` Նա-ն, երկխոսում են և իրար բնութագրում, հավատում, նվիրվում, խոռվում ու տազնապում: Երկխոսում են անգամ աչքն ու սիրտը:

Հրաշալի է գեղեցկուհու ամբողջական պատկերը` հագուկապը, ծով աչքեր, թխամպ հոնքեր, հասակը վարդենի, հագուկապը կանաչ է, կապան` գույն զգույն և այլն:

Վերլուծի՛ր որևէ հայրեն:

3. Միջնադարի վերջին հանճարը` «Խալխի նոքար» Սայաթ-Նովան, այսօր էլ բոլորիս հետ է ու բոլորիս հոգում: Այսօր էլ մենք նրա քամանչայի հնչյուն ների մեջ ենք գտնում մեզ հուզող բազում հարցերի պատասխանները:

Բացառիկ ուժի ու հմայքի տեր մի բանաստեղծ, ում մասին Չարենցն ասել է. «Ոսկի բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու, քեզ միայն քո յարն է վառել, քանի՛ յարեր վառել ես դու »: Ու դեռ վառվում են «էն գալում յարի » տեսքով հիվանդացածները և խոստովանվում մեծ սիրերգակին:

Սայաթ-Նովան ծնվել է կիսաճորտի ընտանիքում 1722-ին, Թիֆլիսում:

Հայրը` Ադանայից Հալեպ, այնուհետև Թիֆլիս տեղափոխված մահտեսի Կարապետն է, մայրը` սանահինցի Սառան: Այս փաստերը գրել է ինքը` Սայաթ-Նովան, իր խաղերում: Եղել է ջուլհակի աշակերտ, 15 տարեկանում մեծ ջանք է դրել գիր ու գրչին ընտելանալու, բայց նրա դպրոցը կյանքն էր, բազմալեզու ու խայտանկար Թիֆլիսը, որի փողոցներում էլ սովորում է լեզուներ ու հմտանում դրանց մեջ: 19 տարեկանում վրաց գորագնդի կազմում Սայաթ-Նովան մասնակցում է Նադիր շահի հնդկական արշավանքներին :

Երգիչը կարող էր լինել Գիվի Ամիրխանյանի հեծելազորում, բայց ոչ Հերակլի շքախմբում, ոչ էլ իբրև աշուղ-սազանդար: 1738-ին արշավանքին միացել է նաև 18-ամյա Հերակլը. Սայաթ-Նովան աչքի է ընկել երգչի իր աստվածատուր շնորհքով և արժանացել Հերակլի համակրանքին ու նրա հովանավորչությամբ դարձել վրացական

արքունիքի երգիչ: Այդ օրվանից էլ պալատական երգչի ճակատագիրը միահյուսվում է վրաց արքայաքույր և արքայադուստր Աննա Բատոնաշվիլու ճակատագրին: Պալատում նրան չափազանց սիրում էին, նա գնահատված էր, պալատական հանդեսների զարդը և մեծագույն ներշնչանքը: Նրա գեղեցիկ սիրո պատմությունը հասնում է նաև Հերակլին և, բազմաթիվ դավերի արդյունքում, նա վտարվում է արքունիքից:

Այս դառը բաժանման գեղարվեստական արտացոլումն է «Դուն էն գլխեն» հանճարեղ տաղը, որտեղ բանաստեղծը արժանապատվորեն պաշտպանում է իրեն՝ տալով իր ինքնագնահատականը. «Ամեն մարդ չի կանա խմի իմ ջուրն ո՛ւրիշ ջրերն է,

Ամեն մարդ չի կանա կարդա՝ իմ գիրըն ո՛ւրիշ գրերն է »:

Հերակլը նրան նորից ընդունել է արքունիք, բայց մի քանի տարի հետո վտարել՝ անդառնալի պատիժ սահմանելով՝ դարձնել տեր Ստեփանոս վանական: Սայաթ-Նովա նշանակում է երգի որսորդ, ամբողջ կյանքում նա երգեց սերը, որ հիվանդություն էր ու կյանք. Կնոջ գեղեցկության չափանիշը նրա համար իր բացառիկ սերն է՝ Աննան, որին նա մեկ ասում է գոգալ, մեկ՝ գովելի, մեկ՝ նազանի, մեկ յար, մեկ՝ զալում (անգուր), մեկ՝ Բեմուրվաթ, որոնք բոլորն էլ ունեն միայն մեկ անուն՝ Սեր: Ոգեղեն սեր, որ ապրեց իր՝ բանաստեղծի մեջ ու ապրում է յուրաքանչյուրի մեջ:

Գեղեցկուհու պատկերը փորագրելու գործիքով՝ դալամով քաշած է, ատամները ոսկու մեջ շարած են, երեսը նոր լուսնի նման է, ծովային ծաղիկ է գեղեցկուհին, հովից բացված մանուշակ, ծոցի մեջ վարդ է, սմբուլ ու սուսան. ինչպե՞ս դիմանա հողեղեն երգիչը այս երկնային գեղեցկութ-
յանը :

Ինչպե՞ս բացատրի անբացատրելին՝ սերը, որ կրակի պես այրում է՝ «դուն կըրակ, հաքածըտ կըրակ, վու՛ր մե կըրակին դիմանամ»:

Սայաթ-Նովան «իր յարի» սիրահարն է, իսկ այդ յարը ուրիշ է, որովհետև բոլորի մեջ այն միակն է, առանց որի աշխարհը դատարկվում է, որի մոտ գնալու պատճառը մոռանում է կրակված սիրահարը. «Մոռացիլ իմ... լավ միտս չէ, թե ինչ բանի համա էկա»: Մինչդեռ գնացել էր կրկին հավաստելու՝ «Առանց քիզ ի՞նչ կոնիմ սոյբաթն ու սազն.....Առանց քիզ ի՞նչ կոնիմ աշխարիս մալըն...»: Ուրեմն՝ ըստ մեծ սիրերգակի՝ սերը ապրելու միակ պայմանն է, աշխարհն ընկալելու ու ճանաչելու միակ հավաստիքը: Այլապես սիրած կինը՝ Աննան, իր մերժումով ամայացնում է աշխարհը մեծ սիրահարի համար և սպանում՝ « Էս քու Սայաթ-Նովուն դո՛ւն սպանեցիր»: Սայաթ – Նովայի մեծ սերը աղոթք է, աղերս, խնդրանք ու պահանջ, որի հետագա կենդանացնողը եղավ Հարդագողի մեծ ճամփորդը՝ Եղիշե Չարենցը:

4. Հայ գրականության հանճարեղ երևույթներից մեկը՝ «Վերք Հայաստանին» մեր ժողովրդի հերոսական ասքի՝ «Մասնա ծոերի» շարունակությունն է՝ իր

հայրենասիրական հզոր պաթոսով, իր այրող ցավերով, իր ժողովրդական հրաշալի լեզվով:

Հայ նոր գրականության հիմնադիրը, անկրկնելի մանկավարժն ու լուսավորիչը այս ասքը երկնել է՝ նախապես իր հոգում ապրելով ու այրվելով:

Աբովյանի գլուխգործոցը՝ «Վերք Հայաստանի»-ն գրողի ապրած հոգեկան արթնացման, հայ ժողովրդի սոցիալական և ազատագրական պայքարի գաղափարներով համակվելու պայծառ էջն է, հայրենասիրական ներշնչանքների բարձրակետը: Այս վեպը հայրենասիրության տեսակետից չի ունեցել իր նախորդը, այն «զանգ էր ու սահագանգ, ազատագրության ջեր

մեռանդ կանչ ու փրկության աղաղակ» (Ս. Աղաբաբյան): Աղոթագիրք «Նարեկից» հետո այն դարձավ ազգային ազատագրության գաղափարախոսական դասագիրք, քանի որ գրքի գլխավոր հերոսը՝ Աղասին, Սասունցի Դավթի

նորագույն շառավիղն է, որ իր դյուցազնական կերպարանքով հանդես է գալիս նաև ժողովրդի տառապանքների արտահայտիչ:

Հենց այս է հիմք տվել Ավետիք Իսահակյանին՝ տալու հետևյալ բնութագրությունը. «Եվ ճշմարտություն է, որ Աղասին իր կապուտակ ձիով՝ դոփելով, փայլատակելով ու զրնգալով, քառասմբակ անցել է հայ ժողովրդի հոգու միջով»: Նույն միտքն է հաստատել նաև Դերենիկ Դեմիրճյանը՝ ասելով. «Մենք մեր աչքով տեսնում էինք, ինչպես հայ գյուղացին գալով քաղաք, իր ձին թողնում էր քարվանսարայի ախտոներում, կատարում իր գնումները և ապա մտնում էր գրախանութ և պահանջում «Աղասու պատմությունը»՝ «Վերք Հայաստանին»:

Ինչո՞ւ: Շատ պարզ պատճառով. Հայր վերջապես ստացել էր մի ավետարան՝ իր բազմադարյան պատմության, իր կրած տառապանքների, իր հերոսական գործերի մասին: Հայ ժողովուրդը դարերով պայքարեց ու ստրկացվեց, ընկավ ու հառնեց՝ տանելով իր բազում վերքերը՝ Պարսկաս

տանի, Բյուզանդիայի, Հռոմի, արաբների, թաթար-մոնղոլների, սելջուկների տիրապետության տակ: Սա մեծագույն վերք էր, անբուժելի վերք, և այդ վերքը

Աբովյանը դարձրեց պատմագրություն, ողբասացույթ յուն, գովաբանություն:

Հայաստանի վերքը պետականություն, անկախություն, ազատություն չունենալն էր, իսկ «Ողբ հայրենասիրի» Աբովյանի կրակված սրտի պոռթկումն էր, որը իր ժանրով մոտենում է մեր էպոսի ժողովրդական վիպասանության ձևին, երգախառն պատմելաձևին:

Աբովյանը գրեց Քանաքեռի բարբառով, ժողովրդին հասկանալի լեզվով, հերոս ընտրեց ժողովրդի ծոցից ելած անպարտելի Աղասուն, որի կերպարում կարծես վերածնվել է Սասունցի Դավիթը. «Տ՛ելնի ձեր դեմ Սասնա Դավիթ, տ՛ելնի ձեր դեմ Թուր-Կեծակին»:

Աղասին էլ Դավթի նման կռվում էր միայն պատերազմ հրահրողների դեմ, ոչ թե ժողովրդի, նա էլ Հասան խանին չի սպանում Անիի ավերակներում, այլ ուզում է դահճի դատաստանը բոլորի աչքի առաջ կայանա, որպեսզի ժողովուրդն էլ հաստատի իր հաղթանակը:

Դավիթն ու Ադասին նույն ժողովրդի նվիրյալ գավակներն են, հերոսական գավակները, որոնք հանդիպում են պատմության խաչուղիներում՝ անհիշելի ժամանակներից մինչև XIX դար: Աբովյանը հայ ժողովրդի տառապագին ողբասացն է՝ Եղիշեից ու Խորենացուց հետո: «Վերք Հայաստանին» միայն պատմական անցյալի, իր ժամանակի ներկայի արձանագրությունը չէ, այն մեր ժողովրդի ներքին կյանքի անգուժական նկարչությունն է. հենց այս գաղափարներն են այրել Աբովյանին, որ «Վերքը» ժայթքել է որպես հրաբուխ, և այսօր էլ այրում է իր արդիականությամբ, ինչպես էպոսը՝ հյուսված երգախառն պատմություններից: Աբովյանը եղել է ազգային հպարտության հավատավորը՝ Արարատի վերելքի օրերին և դորպատյան միջավայրում, Երևանում և Թիֆլիսում, և հիմա էլ գնում է «Դեպի լյառն Մասիս»՝ հավերժանալու և հավերժացնելու Հայաստան աշխարհը:

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարերի
գնահատման չափանիշներ

X դասարան

1. 1-ին հարց՝ 1-3-րդ ենթահարցերը՝ 1-ական միավոր, 4-րդը՝ 2մ
2. 2-րդ հարց՝ 1-6 –րդ ենթահարցերը՝ 0,5- ական միավոր, 7-րդը՝ 2մ.
3. 3-րդ հարց՝ 1-2-րդ ենթահարցերը՝ 1-ական միավոր, 3-4-րդը՝ 1,5-ական մ.
4. 4-րդ հարց՝ 1-2-րդ ենթահարցերը՝ 1-ական միավոր, 3-4-րդը՝ 1,5-ական մ.